ԼՐԱՏՈՒ
ХРОНИКА
NEWS

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր
@

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԻՇԱՏԱԿԻ ՊԱՏԱՐԱԳ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

2015 թ. ապրիլի 8-12-ին տեղի ունեցավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակության պետական-պաշտոնական այցը Իտալիայի Հանրապետություն: Այն դարձավ իրապես պատմական: Այցելության պաշտոնական մասն ընդգրկում էր մի շարք հանդիպումներ և արարողակարգային միջոցառումներ: Հանրապետության նախագահը ապրիլի 9-ին ծաղկեպսակ դրեց Անհայտ զինվորի հուշարձանին, ապա հանդիպեց Իտալիայի Հանրապետության նախագահ Սերջիո Մատարելլայի հետ: Առանձնակի խորհուրդ հաղորդվեց այն հանգամանքին, որ այս հանդիպումը տեղի է ունենում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման նախօրեին: Ս. Սարգսյանը ապրիլի 9-ին հանդիպեց նաև Իտալիայի պատգամավորների պալատի նախագահ Լաուրա Բոլդրինիի և Իտալիայի սենատի նախագահ Պիետրո Գրասսոյի, ինչպես նաև Հռոմի քաղաքապետ Իգնացիո Մարինոյի հետ: ՀՀ նախագահին այնուհետև այցելեց «Վիտտորիանո» թանգարանային համալիր, ուր դիտեց «Հայաստան-տապանի ժողովուրդ» ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվում են Հայաստանի պատմությանն ու Իտալիայում հայերի ներկայությանը վերաբերող նյութեր և ցուցանմուշներ: Այստեղ ներկայացված են նաև Հայոց ցեղասպանությանը վերաբերվող նյութեր: Այս ցուցահանդեսով սկսվեցին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներն Իտալիայում:

Ապրիլի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Իտալիայի Նեապոլ քաղաքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի

հետ միասին մասնակցեց Ս. Գրիգոր հայի եկեղեցում կազմակերպված արարողություններին։

Ս.Գրիգոր հայի վանական համալիրում Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ՀՀ նախագահին և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին դիմավորեցին Նեապոլի արքեպիսկոպոս կարդինալ Կրեշենցիո Սեպեն, Կամպանիայի նահանգապետ Ստեֆանո Կալդորոն, Նեապոլի քաղաքապետ Լուիջի դե Մաջիստիսը և մենաստանի միանձնուհիները։

Այստեղ տեղի ունեցավ էկումենիկ արարողություն, որի ժամանակ Հայաստանյայց Առաքելական և Կաթոլիկ Եկեղեցիների սպասավորները միասնական աղոթք բարձրացրեցին աշխարհում խաղաղության, հայ և իտալացի ժողովուրդների բարեկամության և բարօրության համար։

Արարողությունից հետո վանքի ներսում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության հուշակոթող-խաչքարի բացման և օծման արարողությունը։ Այս խաչքարը կրկնօրինակն է Ջուղայի բարբարոսաբար ոչնչացված խաչքարերից մեկի։ Ցեղասպանության ոգեկոչման համար որպես հուշակոթող ընտրված Ջուղայի նման գեղեցկահյուս խաչքարը խորհրդանշում է, որ Հայոց ցեղասպանությունը որպես չպատժված հանցագործություն այժմ իր ավերները շարունակում է նաև Ադրբեջանի կողմից իրականացվող մշակութային ցեղասպանությամբ։

Արարողությունից հետո վանքում կազմակերպված հանդիսության ժամանակ ելույթ ունեցավ Ս. Սարգսյանը՝ կարևորելով էկումենիկ արարողությունը և խաչքար-հուշարձանի բացումը հարյուրամյակի ոգեկոչման համատեքստում։

Բարձր գնահատելով հայ և իտալացի մի շարք մշակութային, քաղաքական և տնտեսական գործիչների հայ-իտալական կապերի ամրապնդման և հայանպաստ գործունեության համար, Հանրապատության նախագահը նրանց հանձնեց պետական բարձր պարգևներ։ Նեապոլի քաղաքապետ Լուիջի դե Մաջիստրիստն իր հերթին Ս. Սարգսյանին պարգևատրեց Նեապոլ քաղաքի շքանշանով։

Եկեղեցու Ս. Գրիգորի մատուռի երկու պատերին Լուսավորչի վիրապից ելնելը և քարոզությունը ներկայացնող մեծադիր երկու կտավներն են՝

կատարված իտալական Վերածնության վարպետների աշակերտների կողմից 17-18-րդ դարերում։

Նեապոլում պահվող մասունքների համար ասվում է, թե դրանք Պոլսից փոխադրվել են Կոստանդին VI Կոպրոնիմոս կայսրի (վխմ. 775 թ.) պատկերապաշտների դեմ հարուցած հալածանքների ժամանակ։

Նրանք Նեապոլում հիմնում են նոր կուսանոց, որը գործում է մինչև այսօր։ Մենաստանին կից գտնվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ուր և պահվում են Ս. Գրիգորի Կ. Պոլսից բերված նշխարները։ Ի հիշատակ Արևելքից եկած և այս մենաստանը հիմնած կույսերի, եկեղեցու մուտքին կան երեք նկարներ։ Առաջինում նավով Նեապոլ եկող միանձնուհիներն են պատկերված։ Երկրորդում՝ նրանք իրենց հետ բերում են Ս. Գրիգորի մասունքները կրող աճյունասափորը։ Երրորդ նկարում կույսերն ափ են իջնում Նեապոլում, և մայրապետը մասունքներն ամփոփող աճյունասափորը հանձնում է նեապոլցիներին։

Նեապոլ Ս. Գրիգորի մասունքների բերման և ընդհանրապես սրբի մասին գիրք է գրել այս մենաստանի մայրապետներից Մարիա Բոնուկիեն։ Գիրքը լույս է տեսել 1717 թ.։ Գրքի հայերեն թարգմանությունը՝ «Պատմութիւն կենաց, մարտիրոսութեան և սքանչելեաց Սրբոյն Գրիգորի» Վենետիկի Մխիթարյանները տպագրել են 1737 թ.։ Այս գրքում ասվում է, որ Հայաստանից շատ ուխտավորներ են գալիս իրենց խոնարհումը բերելու սրբի մասունքներին։

Ֆրանցիսկոս Պապը ապրիլի 12-ին Հռոմի Ս. Պետրոսի տաճարում մատուցեց Ս. Պատարագ։ Հռոմի Սրբազան քահանայապետը Հայոց Մեծ Եղեռնն անվանեց քսաներորդ դարի առաջին ցեղասպանություն, իսկ Ս. Պատարագին նախորդած հատուկ արարողությամբ Ս. Գրիգոր Նարեկացին դասվեց Հռոմեական եկեղեցու կողմից Տիեզերական անվանվող վարդապետների շարքը։

Ապրիլի 12-ին Վատիկանի Ս. Պետրոսի տաճարում, Ֆրանցիսկոս Պապի մատուցած Պատարագը իրապես պատմական դարձավ։ Ս. Պատարագի սկզբում Հայոց եկեղեցու սրբերից և մեր ժողովրդի գրական մեծություններից Գրիգոր Նարեկացին դասվեց Հռոմեական եկեղեցու կողմից Տիեզերական անվանվող վարդապետների շարքը։ Այս արարողության սկզբում

կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները համապատասխան վկայություններ և փաստարկներ բերեցին՝ հավաստելու համար Նարեկացուն այդ վարդապետների շարքը դասելը, ինչպես նաև թվարկեցին եկեղեցական տարբեր համայնքների դիմումները, որոնք նույն խնդրանքն ունեին, որից հետո հանդիսավորապես ընդունված ծիսակարգով կատարվեց այդ արարողությունը։

Գրիգոր Նարեկացուն կաթոլիկ եկեղեցու վարդապետների շարքը դասելը նշանակալից էր մի քանի առումով։ Նարեկացին այս շարքում 36-րդն է։ Երկրորդ՝ քույր եկեղեցիների Տոնացույցում սրբադասվել, ինչպես նաև այդ եկեղեցիների կողմից կանոնացվել են մյուս եկեղեցիների այն հոգևորականները, ովքեր պատկանել են Ընդհանրական եկեղեցու մինչև V դարն ընկած շրջանին։

Լինելով X դարի հեղինակ, Նարեկացին հետևեց ոչ թե արդեն գոյություն ունեցող դավանական բաժանումներին, այլ համաքրիստոնեական գաղափարներին, որով հռչակված էր ոչ միայն որպես գրական եզակիորեն մեծարժեք ստեղծագործության հեղինակ, այլև որպես համաքրիստոնեական և համամարդկային գաղափարների արծարծող, ով գրել է այն ամենի մասին, ինչը միացրել և ոչ թե բաժանել է մարդկանց։

Ս. Պատարագի ընթացքում Հռոմի քահանայապետը հայ ժողովրդին անվանելով առաջին քրիստոնյա ժողովուրդ, Հայոց Մեծ Եղեռնը դիտարկեց մարդկության պատմության վերջին հարյուրամյակի ընդհանուր համատեքստում որպես XX դարի առաջին ցեղասպանություն։

Սկսված XXI դարը Պապը բնորոշեց որպես երրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջան, որն ընթանում է աշխարհի տարբեր կողմերում բռնկվող պատերազմներով, որոնք էլ իրենց հերթին ածանցված են քսաներորդ դարից փոխանցված իրողություններից։ Պապը քսաներորդ դարի որպես երեք մեծ ողբերգություններ անվանեց Հայոց ցեղասպանությունը, ֆաշիզմը և ստալինիզմը։

Նման ձևակերպմամբ Հռոմի քահանայապետը Հայոց ցեղասպանությունը համարեց ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ մարդկության ողբերգությունը, այն դիտարկելով XX դարի իրար փոխկապակցված ողբերգությունների համատեքստում։ Պապը ընդգծեց նաև, թե Հայոց ցեղասպանության

ոգեկոչումը միայն պատմական նշանակություն չունի և միայն անցյալի համար չէ, որ կատարվում է, այլ որպեսզի կանխվեն հետագա ոճրագործությունները: Պապի բնորոշմամբ. «Կարևոր է, և հիրավի մեր պարտքն է հարգել նրանց հիշատակը, քանի որ երբ հիշողությունն է մարում, չարիքն այդ վերքերը նորոգում է: Թաքցնել կամ ժխտել չարիքը, նշանակում է արնաքամ անել վերքը առանց վիրակապելու»:

Ի հիշատակ Հայոց Մեծ Եղեռնի նահատակների հոգիների Ս. Պատարագի ավարտին հայկական ծեսով կատարվեց հոգեհանգստյան արարողություն: Ոգեկոչելով մեր նահատակների հիշատակը և դատապարտելով աշխարհում կատարվող բոլոր ցեղասպանությունները Հոգեհանգստյան կարգի ժամանակ խոսք ասացին Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսները,:

Ս. Պատարագից հետո ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը առանձնազրույց ունեցավ Ֆրանցիսկոս Պապի հետ:

Ս. Պետրոսի տաճարում մատուցված պատարագը և Պապի խոսքը ցույց տվեցին, որ աշխարհը միայն նյութական շահի վրա չէ, որ հիմնված է և կա նաև բարոյական աշխարհը, որը թելադրում է իր բարոյական արժեհամակարգը:

Հռոմի Պապի խոսքը մի նոր աստիճանի բարձրացրեց հայկական ցեղասպանության միջազգայնորեն ճանաչման և դատապարտման գործընթացը, իսկ Գրիգոր Նարեկացու սրբադասումը գնահատելի է հայոց հոգևոր հարուստ մշակույթը աշխարհին առավել ճանաչելի դարձնելու առումով:

Ս. Պետրոսի տաճարում Նարեկացու համար հնչած բանաձևումներն ու ձևակերպումները հնարավորություն են տալիս հայ հոգևոր մշակույթը ներկայացնելու միջնադարյան ունիվերսալիզմի շրջանակում, վեր հանելու մեր միջնադարյան մատենագրության մեջ եղած համաքրիստոնեական և համամարդկային հնչեղություն ունեցող արժեքները և դրանք ներկայացնել աշխարհին որպես բարոյական աստվածաբանության դրսևորումներ՝ դրված գեղարվեստական բարձրարժեք ձևերի մեջ, ինչպես որ այսօր ընկալվում և արժևորվում են Եփրեմ Ասորու և Հովհան Ոսկեբերանի ստեղծագործությունները:

Նարեկացին անվանվում է հազարամյակի բանաստեղծ, ոչ թե այն պատճառով, որ Նարեկը գրվել է երկրորդ հազարամյակի սկզբին, այլ նրանում արծարծված գաղափարները կենսունակ են եղել ողջ հազարամյակի ընթացքում։ Նարեկացուն հռոմեական եկեղեցու վարդապետների շարքը դասելը գալիս է վկայելու, որ Նարեկա վանքի սուրբը երրորդ հազարամյակում ևս շարունակելու է մնալ հազարամյակի բանաստեղծը։

Նարեկացու և Նարեկա դպրոցի միջոցով հարգանքի տուրք մատուցվեց Վասպուրական ու ողջ Արևմտահայ աշխարհին, որը մինչև 1915 թ. ցեղասպանության իրականացումը բազում մնայուն և անանց արժեքներ է տվել համաշխարհային քաղաքակրթությանը։